Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն*

Շրջաբերական 2016 / #2

Ֆրանկֆուրտ, 09.05.2016

**Սիրելի Միութենականներ և Հայրենակիցներ,**

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2016թ. մայիսի 16-ին, երկուշաբթի, ժամը՝ 12:00



**ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ**

Իր հայկական տաղավարով և ազգային պարերով մեր միությունը այս տարի ևս կմասնակցի Հոգեգալուստի միջազգային տոնին: Խնդրում ենք ակտիվորեն մասնակցել և աջակցել մեր տաղավարին՝ Ձեր պատրաստած հայկական ուտեստներով:

**Հասցեն՝** Dominikanerkloster, Kurt-Schumacher-Str. 23, 60311 Frankfurt am Main

2016թ. մայիսի 28-ին՝ շաբաթ, ժամը՝ 16:30-ին



**ՄԱՅԻՍ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՄԻՍ**

Հեսսէնի Հայ Մշակութային Միության, Մանհայմի Հայ Մշակութային Արարատ Միության և Աշաֆենբուրգի Հայ Համայնքի միասնական ծրագիր: Միությունների անդամները և դպրոցի սաները հանդես կգան իրենց պատրաստած ծրագրով՝ երգով, ասմունքով և ազգային պարով:

**Հասցեն՝** St. Thomasgemeinde, Heddernheimer Kirchstr. 5, 60439 Frankfurt am Main

2016թ. հունիսի 18-ին՝ շաբաթ, ժամը՝ 14:30-ին



**ԷՔՍԿՈՒՐՍԻԱ**

ՀՀՄՄ-ի երիտասարդական խումբը շաբաթօրյա դպրոցի աշակերտների հետ նախաձեռնում է էքսկուրսիա դեպի Նիդդա այգում գտնվող Մինի Գոլֆի հրապարակ: Մինի գոլֆից հետո միասին կխաղանք ֆուտբոլ: Նաեւ խորովածի հնարավորություն կա: Խնդրում ենք յուրաքանչյուրին բերել իր հետ ուտելիք եւ խմիչք:

Հասցեն՝ Niddapark, Hadrianstraße 50, 60439 Frankfurt am Main

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2016 / #2 Ֆրանկֆուրտ, 09.05.2016

2016թ. հուլիսի 10-ին՝ կիրակի, ժամը՝ 12:00-ին

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում ժամը 14:00-ից՝



## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Սիրելի հայրենակիցներ, այդ օրը Ձեզ հետ միասին կպատրաստենք համեղ և հետաքրքիր հայկական ուտեստ-ներ: Ուրախ կլինենք Ձեր ակտիվ մասնակցության համար:

**Դեռ համապատասխան վայր ենք փնտրում այս ծրագրի համար: Շուտով նոր տեղեկություններ կստանաք:**

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետեւեք մեր ինտերնետային կայքին՝ **www.armenia.de**)

Միության հանդիպման վայրը բաց է ամեն շաբաթ օր՝ 15:30-ից մինչեւ 19:00: Միության հայկական **շաբաթօրյա դպրոցի դասընթացները** շարունակվում են ժամը 15:30 - 18:00: Լրացուցիչ տեղի են ունենում նաև **ազգային պարի**, և ամիսը 1 անգամ **հայ արվեստի** դասընթացներ:

**Հեսենի ամառային արձակուրդի ժամանակ միության հանդիպման վայրը փակ կլինի:**
Վերջին հանդիպումը նախքան արձակուրդը՝ շաբաթ, հուլիսի 9-ին:
Առաջին հանդիպումը արձակուրդից հետո՝ շաբաթ, սեպտեմբերի 3-ին:

**Միության հասցեն՝** Hamburger Allee 52a, 60486 Frankfurt am Main:

**--------- տեղեկություններ --------- տեղեկություններ --------- տեղեկություններ ---------**

**2016թ. հունիսի 11-ին, շաբաթ, ժամը 18:00-ին**՝ տեղի կունենա կանադահայ երգիչ Թալինի մենահամերգը երեխաների համար: Մանրամասն տեղեկություններ՝ www.a-rm.de

**2016թ. մայիսի 13-ից մինչև 16-ը**՝ Հայ ամառային երիտասարդական հանդիպում Դորսթեն քաղաքում: Մանրամասն տեղեկություններ՝ http://jungearmenier.de/jt/